Ռափայել Պատկանյան

Էգուց

Ինձ մի՛ տանջիլ, մի՛ չարչարիլ, սիրական,
Լոկ խոստումնքդ իմ սրտին չեն բավական.
Բոց աչքերդ ու շուրթերդ վարդանման
Երջանկություն խոստանում են հավիտյան:

Քեզ տեսնելիս, ա՜խ, մոլորվում է միտքս,
Ուժգին, ուժգին թափ է տալիս վառ սիրտս,
Մեկ ջերմաջերմ, մեկ սառ վազում է քիրտս.
Ջորությունս հատավ ինձնից, սիրական:

«Էգուց, էգուց» լսում եմ քու բերանից.

Հույսս հատավ, հատավ էսքան խաբվելից,
Քունս փախավ, փախավ իսպառ ինձանից,
Դե՞ ես դու չար, թե՞ հրեշտակ ես աննման:

Էլ մի՛ խաբիլ ու մի՛ խաբվիլ, անձկալիս,
Էգուցները միշտ նման չեն հետ գալիս.

Վա՜յ թե էգուց աղի արցունք թափելիս՝
Դու ինձ ճամփես դեպի մութին գերեզման: